

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/5**

**30 սեպտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արտակ Թորոսյանի 01.09.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 6100924 ստուգման ակտի դեմ:

#### **Ա/Ձ Արտակ Թորոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Արտակ Թորոսյանը հայտնում է, որ ս.թ. հուլիսի 12-ին, ժամը 12:00 սահմաններում իր վարսավիրանոց են եկել Էրեբունու ՀՏ հարկային տեսուչները, ծանոթացրել են հանձնարարագրին և պահանջել են խփել 1000 դրամ, որից հետո հանել են ֆիսկալ հաշվետվությունը: Այնուհետև բանավոր կերպով առաջարկել են տուգանել 150.000 դրամ, սակայն Ա/Ձ Արտակ Թորոսյանը մերժել է, քանի որ որևէ հաճախորդի ծառայություն չի մատուցվել:

Հաջորդ օրը Ա/Ձ Արտակ Թորոսյանը ստացել է նամակ, որում գրվածը չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից և Ա/Ձ Արտակ Թորոսյանը խնդրում է վերանայել ստուգման ակտը, քանի որ իր կողմից խախտումներ թույլ չեն տրվել:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 08.08.2014 թ-ի թիվ 6200947 հանձնարարագրի Ա/Ձ Արտակ Թորոսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 12.08.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6200947 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որում մասնավորապես նշվել է.

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Հայկազ Հարությունյանը 12.08.2014 թ-ին, ժամը 12:45-ին ք.Երևան, Նորք 2 նրբ., թիվ 20 հասցեում գործող Ա/Ձ Արտակ Թորոսյանին պատկանող վարսավիրանոցում մատուցվել է ծառայություն (մազերի կտրում), որի դիմաց վճարված 1000 դրամ կանխիկ գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ժամը 12:50-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ, տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 1000 դրամը, ժամը 12:50-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 1000 դրամ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Արտակ Թորոսյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից 19.08.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6100924 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Արտակ Թորոսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 6100924 ստուգման ակտը,

որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենանրի կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետով սահմանված տուգանքը և գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Գանգատի քննարկման ընթացքում Ա/Ձ Արտակ Թորոսյանը պնդեց, որ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6200947 արձանագրությունում նշվածը, որ 12.08.2014 թ-ին ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Հայկազ Հարությունյանին մատուցվել է վարսահարդարման ծառայություն, որի դիմաց վերջինիս կողմից վճարվել է 1000 դրամ, չի համապատասխանում իրականությանը: Ըստ Ա/Ձ Արտակ Թորոսյանի, նշված օրը տեսուչները պահանջել են ՀԴՄ մուտքագրել 1000 դրամ, որից հետո դուրս է բերվել Z հաշվետվություն:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ հսկիչ գնումը կատարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011 թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո ՀԴՄ-ից Z հաշվետվությունը հանելու, չմուտքագրված գումարը մուտքագրվելու և կրկին անգամ Z հաշվետվությունը հանելու փոխարեն, Z հաշվետվությունը հանվել է միայն 1000 դրամը ՀԴՄ մուտքագրվելուց հետո:

Բացի այդ, Հանձնաժողովն արձանագրեց, որ թե Արձանագրությունում, թե դրա հիման վրա կազմված ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 6100924 ստուգման ակտում սխալ են նշված, համապատասխանաբար՝ իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել և պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքը: Մասնավորապես, Արձանագրությունում նշված է, որ խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Սակայն, քանի որ քննարկվող դեպքում խոսքը գնում է մատուցված ծառայության մասին, այլ ոչ թե ապրանքի իրացման, հետևապես Արձանագրությունում որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, պետք է նշվեր վերոգրյալ կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետը: Իր հերթին, ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 6100924 ստուգման ակտում նշված է, որ Ա/Ձ Արտակ Թորոսյանին «Հսկիչ-դրամարկղային մեքենանրի կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով: Սակայն, նշված օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի ուսումնասիրությամբ կարելի է արձանագրել, որ այն գ) ենթակետ չունի:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 57-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի պահանջների խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 6100924 ստուգման ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**